



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1680  
 Մարտ 21, 1994

Արժանաշնորհ  
 Տ. Մամբրէ Ա. Քհնյ. Գուգուեան  
 Հովի Ա. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
 Նախագահ Ծխական Խորհուրդի  
 Գէյմպրիճ.

Սիրելի Տէր Մամբրէ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 23, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 20, 1994-ին, եւ այդ առթիւ ընդրուած են Ծխական Խորհուրդին հինգ անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Ռապրոթ Թագուրեան
- Մայքըլ Ա. Մարգարեան
- Հելէն Գրիգորեան
- Կարի Գալայճեան
- Արթըր Աւագեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի բուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Խաչագոյ Արք. Կարսամեան*

ԽԱՇԱԿ ԱՐԲ. ՊԱՐՄԱՄԵԱՆ  
 Առաջնորդ